Մրցույթ՝ «Երևանի Ն. Ստեփանյանի անվան հ. 71 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի դասվար (14 դասաժամ), մաթեմատիկայի (10 դասաժամ), աշխարհագրության (21 դասաժամ), ուսուցիչների թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:

Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1) դիմում (Ձև 1),1 լուսանկար 3x4 չափի,
2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ(դիպլոմ),
3) անձը հաստատող փաստաթուղթ,
4) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝
   աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային
   գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
5) ինքնակենսագրություն (Ձև 5),
6) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական
   գրքույկ,
8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում), որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են՝ սեպտեմբերի 1-ից 14-ը ներառյալ, ամեն օր ժամը 10^{00} –ից 15^{00}-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Մրցույթը տեղի կունենա 2023թ. սեպտեմբերի 19-ին՝ ժամը 14^{30}–ին, «Երևանի Ն. Ստեփանյանի անվան հ. 71 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում, հասցեն՝ ՀՀ, ք.Երևան,

Հանրապետության 72 Տեղեկությունների համար զանգահարել (010) 52 38 82 հեռախոսահամարով: